ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/68

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Մանուկյանի, Հ. Հովհաննիսյանի,

«Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մուրադյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթ, ավտոպահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 17.08.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին՝

1. Հրավերի 1-ին չափաբաժնի մասով չկիրառել օբյեկտիվորեն չհիմնավորված ոչ պակաս M(130) արագության ինդեքսը,
2. Հրավերի 2-րդ չափաբաժնում հստակ ձևակերպել անվադողի սեզոնայնությունը (համասեզոնային, թե ձմեռային) վերացնելով ընտրված տեսակին ոչ բնորոշ տեխնիկական բնութագրերը,
3. մատակարարման ժամկետը սահմանել 90 օրացուցային օրից ոչ պակաս:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 17.08.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, բողոքի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

07.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/68 համարի ծածկագիրը:

14.09.2021թ.-ին, 22.09.2021թ.-ին և 24.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.09.2021թ.-ին:

2. «Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ն 17.08.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սողն թվականի օգոստոսի 3-ին armeps.am կայքում հրապարակվել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ «Պատվիրատու») կարիքների համար «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի հրավերը (այսուհետ «հրավեր»): Ըստ հրավերի մրցույթի արդյունքնեյւով ձեռքբերվելիք ավտոպահեստամասերը խմբավորված են 2 չափաբաժիններում:

Հարկ է նշել, որ ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով Պատվիրատուի կողմից մրցույթ էր հայտարարվել դեռևս սույն թվականի մայիսի 11-ին «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8» ծածկագրի ներքո, որի հրավերը 18-րդ և 19-րդ չափաբաժիեեերի մասով, բողոքարկվել է սույն թվականի հուլիսի 24-ին «ՋԵԹ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ի կողմից: Վերջինիս քննության արդյունքում սույն թվականի հուլիսի 23-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացվել է թիվ ԳԲՔԱ-Լ0-2021/54 որոշումը (այսուհետ «Որոշում»), որով «ՋԵԹ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ-ի բողոքն ամբողջությամբ բավարարվել է, մասնավորապես Որոշմամբ սահմանվել է «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի պարտավորությունը կատարելու համապատասխան փոփոխություններ մրցույթի հրավերում 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով, իսկ փոփոխություն կատարելու անհնարինության դեպքում չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը նույն չափաբաժինների մասով: Արդյունքում Պատվիրատուի կողմից հիշյալ 2 չափաբաժինների մասով հայտարարվել է նոր գնման ընթացակարգ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով, սակայն այս անգամ ես հրավերը կազմվել է խախտումներով:

Ղեկավարվելով «Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետ «Օրենք») 50-րդ հոդվածի դրույթների պահանջներով ներկայացնում եմ սույն բողոքն առ այն, որ հրավերում սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժինները կազմված են Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների խախտումներով, և կրկին առկա է Որոշմամբ արձանագրված խախտումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Իր հերթին Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Մինչդեռ հրավերում նախատեսված 1-ին և 2-րդ չափաբաժիններում սահմանված են գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համարը	*Ապրանքի անվանումը*	*Տեխնիկական բնութագրերը*
1	*ավտոմեքենաների պահեստամասեր Անվադող*	*Օդաճնշական դողեր 7.50.R20, ավտոբուսների համար, համասեզոնային, օդախցիկով և ժապավենով, կառուցվածքը- ռադիալ, պահպանաշերտի գծանկարը ուղիղ, չափման միավորը հատ, անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում, անվադողի վրա նշված է շերտայնությունը ոչ պակաս PR-14, Speed inhex ոչ պակաս M(130); LOAD inhex ոչ պակաս 130/128; MAX.LOAD ոչ պակաս 1900/1800 կգ: Անվադողի արտադրության տարեթիվը 2020- 2021թթ: Գործարանային վազքը (երաշխիք) ոչ պակաս 65.000 կմ: Նոր չօգտագործված, գույնը սև, վախենում է կրակից, գործող ստանդարտը 2,US 183-99, փոխադրումը ցանկացած տրանսպորտով, մատակարարի կողմից:*
2	*ավտոմեքենաների պահեստամասեր Անվադող*	*Օդաճնշական դողեր 195/75R16C թեթև բեռնատար ավտոմեքենաների համար, համասեզոնային, առանց օդախցիկի, կառուցվածքը-ռադիալ, չափման միավորը հատ, Անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում, Անվադողի վրա նշված է արագության ինդեքսը ոչ պակաս Speeh index- Q(160), ծանրաբեռնվածության ինդեքսը ոչ պակաս Load index 107/105, առավելագույն ծանրաբեռնվածության ինդեքսը Max.load(kg) ոչ պակաս 975/925kg, Անվադողի վրա պատկերված փնի ձմռան պայմաններում շահագործվելու փաստը հաստատող նշան ձյան փաթիլ, կամ եռագագաթ, կամ նմանատիպ նշան, արտադրության տարեթիվը 2020-2021թթ., գործարանային վազքը (երաշխիք) ոչ պակաս 30.000 կմ: Նոր չօգտագործված, գույնը սև, վախենում է կրակից, գործող ստանդարտը 2US 183-99, փոխադրումը ցանկացած տրանսպորտով, մատակարարի կողմից:*

Հարկ է նշել, որ Որոշմամբ արձանագրվել էր, որ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8» ծածկագրով մրցույցի հրավերի 18-րդ չափաբաժնում սահմանված 1մ(130կմ/ժ) արագության ինդեքսն օբյեկտիվորեն հիմնավորված չէ, սակայն հրավերի 1-ով չափաբաժնում կրկին սահմանված է նույն արագության ինդեքսը:

Ինչ վերաբերում է հրավերի 2-րդ չափաբաժնին, ապա Պատվիրատուն նշել է գոյություն չունեցող անվադողի բնութագիր: Մասնավորապես անվադողերն արտադրվում են տարբեր եղանակների համար և լինում են ամառային, համասեզոնային կամ ձմեռային: Պատվիրատուի նշած համասեզոնային անվադողի վրա չի կարող լինել ձյան փաթիլ, քանի որ նման նշան լինում է բացառապես ձմեռային անվադողերի վրա: Այս առնչությամբ Պատվիրատուն պետք է հստակ որոշի, թե ի վերջո իրեն համասեզոնային, թե ձմեռային անվադողեր են հարկավոր:

Հարկ է նաև անդրադառնալ մեկ այլ հանգամանքի, մասնավորապես Հրավերում սահմանված է ապրանքների մատակարարման 60 օրացուցային օրվա ժամկետ, որի չպահպանման դեպքում, ըստ պայմանագրի 2.1.1 և 2.1.5 կետերի դրույթների, Պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է կամ հրաժարվել ապրանքից (եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի), կամ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Այս առնչությամբ պետք է նշել, որ Հրավերի 1-ին չափաբաժնում նշված 7.5R20 ավտոբուսի անվադողերն արտադրվում են բացառապես Չինաստանում, և COVID-19 համավարակի ի հայտ գալուց ի վեր Չինաստանից ապրանքները տեղափոխվում են դեպի Հայաստան ոչ թե 60 օրում, այլ որպես կանոն 90 օրվա ընթացքում, այսինքն Հրավերում սահմանված մատակարարման ժամկետն ընդհանրապես իրատեսական չէ: Նման պարագայում հետագայում մրցույցի հաղթողի հետ պայմանագրային հարաբերությունների շրջանակներում վերջինիս կողմից մատակարարման ժամկետի չպահպանման դեպքում (ինչը գրեթե անխուսափելի է) Պատվիրատուն կարող է իր հայեցողական իրավունքից օգտվել ի վնաս մատակարարի, եթե վերջինս չի հանդիսանում է իր «ցանկալի» մատակարարը:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին՝

1. Հրավերի 1-ին չափաբաժնի մասով չկիրառել օբյեկտիվորեն չհիմնավորված ոչ պակաս M(130) արագության ինդեքսը,
2. Հրավերի 2-րդ չափաբաժնում հստակ ձևակերպել անվադողի սեզոնայնությունը (համասեզոնային, թե ձմեռային) վերացնելով ընտրված տեսակին ոչ բնորոշ տեխնիկական բնութագրերը,
3. մատակարարման ժամկետը սահմանել 90 օրացուցային օրից ոչ պակաս:

3. <u>«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 18.08.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/13173-2021 գրությամբ դիմել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ի կողմից 17.08.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 23.08.2021թ.-ին թիվ ԵԱ 568-ել գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր N/ԲՔԱ-ԳՆ/2/13173-2021 գրությամբ <<Զեթ Իքս Գարաժ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնում եմ, որ բողոքաբերը դիմելով բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին 1-ին չափաբաժնի մասով չկիրառել M(130) արագության ինդեքսը, 2-րդ չափաբաժնի մասով ձևակերպել անվադողի սեզոնայնությունը՝ վերացնել ոչ բնորոշ տեխնիկական բնութագիրը և 3-րդ պահանջով մատակարարման ժամկետը սահմանել ոչ պակաս քան 90 օր:

Նշեմ, որ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ ղեկավարվում է բացառապես ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորություններով և այդ լիազորությունների շրջանակում իր կարիքների համար գնումները կազմակերպում է այնպես, որ համապատասխանեն իր պահանջներին, մասնավորապես 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում թույլ չի տրվել ՀՀ «Գնումների մասին» օրենսդրության խախտում: Մեր կողմից բնութագրերը կազմվում են այն տրամաբանությամբ, որպիսիք կապահովվեն Երևան քաղաքի տրանսպորտի անվտանգ և անխափան շահագործումը մինիմալ ծախսերով: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ բնութագրերում մտցրվում են այնպիսի պահանջներ, որոնք անցել են երկար տարիների փորձարկումներ, բայց միևնույն ժամանակ չեն սահմանափակել հնարավոր մասնակիցների շրջանակը: Անվադողերի տեխնիկական բնութագրեր կազմելով՝ մեր նպատակն է ձեռք բերել այնպիսի ապրանքներ, որոնք առավելագույնս կհամապատասխանեն տվյալ խնդիրների լուծմանը և կապահովվեն

բարձր արդյունավետություն, ինչն էլ համապատասխանում է ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին՝ այն է.

2. Գնման առարկայի բնութագրերը՝

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

ուստի հայտնում եմ, որ ամենակարևոր բաղադրիչը <<Երևանի ավտոբուս>> ՓԲԸ-ի գործունեության հետ կապված դա շարժակազմի անվտանգությունն է, իսկ այս բնութագրով անվադողերը թույլ են տալիս մեզ ապահովվել բարձր անվտանգություն: Մենք՝ ելնելով մեր գործունեության առանձնահատկությունից և տարիների ընթացքում կատարելով անվադողերի փորձարկում, շահագործելով ամենաբարդ պայմաններում՝ (ջերմաստիճանի կտրուկ տատանումներ, տարվա բոլոր եղանակներ), եկանք այն եզրահանգման, որ այս բնութագրով անվադողերը ոչ միայն ապահովվում են բարձր անվտանգություն, այլ նաև տնտեսապես ավելի ձեռնտու են, քանի-որ վազքի ավելացման շնորհիվ, արդյունքում ավելի էժան են ստացվում քան այն անվադողերը, որոնք ունեն ավելի նվազ ինդեքսներ: Ահա այս հանգամանքներից դրդված մենք տեխնիկական բնութագրերը կազմել ենք նման ձևով, քանի-որ պատվիրատու ստորաբաժանումը՝ ելնելով իր առաջ դրված խնդիրներից, ինքն է որոշում թե որ տեսակի դողն է ավելի համապատասխանում տվյալ ավտոմեքենայի համար և մենք չենք պատրաստվում անվտանգությունը ստորադասել միայն նրա համար, որ հնարավոր որևէ մի մասնակցի ձեռքի տակ առկա է ապրանք և այն չի համապատասխանում մեր պահանջներին:

Անդրադառնալով կոնկրետ 1-ին չափաբաժնով նախատեսված անվադողին, որի համար մենք սահմանել ենք M (130 կմ, ժամ) արագություն, հայտնում եմ, որ դեռևս 2012-ից, երբ մենք ստացել ենք HIGER մակնիշի ավտոբուսները, այդ ավտոբուսները կոմպլեկտավորված են եղել նույն տեխնիկական բնութագիրն ունեցող անվադողերով, ինչը որ մրցույթով մենք հայտարարել ենք, այսինքն արտադրողը ևս խորհուրդ է տալիս իր ավտոբուսների ճիշտ շահագործման համար նման արագության ինդեքսի կիրառումը, քանի-որ բարձր արագության ինդեքս ունեցող անվադողերը ապահովվում են ավելի դիմացկունություն և երկարակյացություն, ինչը բերում է ավելի շատ խնայողության, քան եթե մենք գնենք ավելի ցածր արագության ինդեքս ունեցող, սակայն ավելի էժան անվադողեր: Մեր կողմից պահպանվել է հնարավոր մասնակիցների շրջանակի ընդլայնման և մրցակցության սկզբունքը, քանի որ նման բնութագիր ունեցող անվադողեր արտադրում են առնվազն ստորև ներկայացրված ընկերությունները.

1-ին չափաբաժին. 7.50R20 1) Wanli ընկերություն՝ SAT06 մոդելը: 2) Primewell ընկերություն՝ PW02 մոդելը: 3) Yelllow Sea ընկերություն՝ YS26 մոդելը: 4) ROADLUX ընկերություն՝ R166 մոդելը,

որոնք հասանելի են հետևյալ հղումներով. 1) www.wanlitire-hf.com, 2) www.primewell.com, 3) https://www.diytrade.com/china/pd/1863714/RADIAL_TIRE_YS26.html, 4) www.lmtyre.com: Այսինքն վերոգրյալից ակնհայտ է, որ ապահովված է երկու և ավելի ընկերության տեսականորեն մասնակցության իրավունքը:

2-րդ չափաբաժնի մասով ցանկանում եմ հայտնել, որ հարգարժան բողոքաբերը ցավոք սրտի ոչ լիարժեք է տիրապետում այն ոլորտին, որտեղ ինքը գործունեություն է իրականացնում, քանի, որ մեր կողմից պահանջված անվադողերը, որոնք պետք է լինեն համասեզոնային և պետք է վրան պարունակի ձմռան պայմաններում շահագործվելու մասին նշան, որպիսիք կարող են լինել՝ ձյան փաթիլը, եռագագաթը կամ այլ նմանատիպ նշանը: Իրականությամ մեջ գոյություն ունեն և հաջորդիվ մենք կներկայացնենք և արտադրողներին և մոդելները և նկարները, որոնք ապացուցում են, որ ձյան փաթիլը և եռագագաթը չեն լինում բացառապես ձմեռային անվադողերի վրա, այլ լինում են նաև համասեզոնային անվադողերի վրա:

2-րդ չափաբաժին. 195/75R16C 1) Torque ընկերություն TQ 7000 AS մոդելը: 2) Matador ընկերություն՝ Sibir Snow Van և MPS 400 Variant ALL Weather 2 մոդելը: 3) Matador ընկերություն՝ MPS 400 Variant ALL Weather 2 մոդելը: 4) Goodyear ընկերություն՝ Vector 4 Seasons Cargo մոդելը: 5) MAXXIS ընկերություն՝ AL2 մոդելը: Նկարները կներկայացրվեն կից.

Անվադողերը հասանելի են հետևյալ հղումներով.1) https://www.torquetyres.com/vantyres, 2) https://www.matador.tires/car/tyres/mps400-variant-aw2, 3) www.maxxisrus.ru www.maxxis.com, 4) www.goodyear.eu https://mosautoshina.ru:

Բողոքաբերի կողմից որպես 3-րդ պահանջ մատնանշվել է, որ մատակարարման ժամկետը լինի 90 օրացույցային օրից ոչ պակաս, որի կապակցությամբ հայտնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին մասի Ը) պարբերության.

ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է

պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում: վերոհիշյալից հետևում է, որ մենք մատակարարման ժամկետը չենք կարող սահմանել 20 օրացուցային օրից պակաս, իսկ սույն մրցույթում մենք սահմանել ենք, որ մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագրի կնքման հիման վրա 60 օրացույցային օրվա ընթաքում: Կարծում եմ, որ այս ժամանակը ավելի քան բավարար է, որպեսի մատակարարը կարողանա իրականացնել իր պարտավորությունը, իսկ COVID-19 համավարակը արդեն մեկ տարուց ավել է, որ կա և մարդիկ ադապտացվել են այդ պայմաններում աշխատելու համար:

Հարգելի պարոն Ներսիսյան՝ հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները միջնորդում եմ Ձեզ, հնարավորինս արագ կազմակերպել սույն գործի քննությունը, քանի որ մեր անվադողերի ռեսուրսները սպառման եզրին են և եթե արագ չկազմակերպենք գնման գործընթացը, ապա լուրջ վտանգ կա, որ մեր ընկերությունն ուղակի չի կարողանա իրականացնել ձմռան նախապատրաստական աշխատանքներ՝ կատվածահար անելով բնակչության բնականոն, պատշաճ և անվտանգ սպասարկումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի դրույթներով, խնդրում եմ մերժել «Ձեթ Իքս Գարաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրված բողոքը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր -

գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ավտոմեքենաների պահեստամասեր Անվադող»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Օդաճնշական դողեր 7.50.R20, ավտոբուսների համար, համասեզոնային, օդախցիկով և ժապավենով, կառուցվածքը-ռադիալ, պահպանաշերտի գծանկարը՝ ուղղիղ, չափման միավորը՝ հատ,Անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում, Անվադողի վրա նշված է ՝ Շերտայնությունը ոչ պակաս PR-14, Speed index՝ ոչ պակաս M(130); LOAD index ոչ պակաս 130/128; MAX.LOAD ոչ պակաս 1900/1800 կգ: Անվադողի արտադրության տարեթիվը 2020-2021թթ: Գործարանային վազքը (երաշխիք) ոչ պակաս 65.000 կմ: Նոր չօգտագործված, Գույնը սև, վախենում է կրակից, գործող ստանդարտը ՀUS 183-99, փոխադրումը Ցանկացած տրանսպորտով, մատակարարի կողմից:»:*

2-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ավտոմեքենաների պահեստամասեր Անվադող»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Օդաճնշական դողեր 195/75R16C թեթև բեռնատար ավտոմեքենաների համար, հանասեզոնային,առանց օդախցիկի, կառուցվածքը-ռադիալ, չափման միավորը՝ հատ, Անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում, Անվադողի վրա նշված է՝ արագության ինդեքսը՝ ոչ պակաս Speed index- Q(160), ծանրաբեռնվածության ինդեքսը՝ ոչ պակաս Load index 107/105, առավելագույն ծանրաբեռնվածության ինդեքսը՝ Max.load(kg) ոչ պակաս 975/925kg, Անվադողի վրա պատկերված լինի ձմռան պայմաններում շահագործվելու փաստը հաստատող նշան՝ ձյան փաթիլ, կամ եռագագաթ, կամ նմանատիպ նշան, Արտադրության տարեթիվը 2020-2021թթ. Գործարանային վազքը (երաշխիք) ոչ պակաս 30.000 կմ: Նոր չօգտագործված, Գույնը սև, վախենում է կրակից, գործող ստանդարտը ՀUS 183-99, փոխադրումը Ցանկացած տրանսպորտով, մատակարարի կողմից:»:*

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ի կողմից 17.08.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև

մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարված «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ավտոմեքենաների պահեստամասեր Անվադող»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Օդաճնշական դողեր 7.50.R20, ավտոբուսների համար, համասեզոնային, օդախցիկով և ժապավենով, կառուցվածքը-ռադիալ, պահպանաշերտի գծանկարը՝ ուղղիղ, չափման միավորը՝ հատ,Անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում, Անվադողի վրա նշված է ՝ Շերտայնությունը ոչ պակաս PR-14, Speed index՝ ոչ պակաս M(130); LOAD index ոչ պակաս 130/128; MAX.LOAD ոչ պակաս 1900/1800 կգ: Անվադողի արտադրության տարեթիվը 2020-2021թթ: Գործարանային վազքը (երաշխիք) ոչ պակաս 65.000 կմ: Նոր չօգտագործված, Գույնը սև, վախենում է կրակից, գործող ստանդարտը ՀUS 183-99, փոխադրումը Ցանկացած տրանսպորտով, մատակարարի կողմից:»:*

2-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ավտոմեքենաների պահեստամասեր Անվադող»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Օդաճնշական դողեր 195/75R16C թեթև բեռնատար ավտոմեքենաների համար, հանասեզոնային,առանց օդախցիկի, կառուցվածքը-ռադիալ, չափման միավորը՝ հատ, Անվադողը պետք է շահագործվի բոլոր եղանակների դեպքում, Անվադողի վրա նշված է՝ արագության ինդեքսը՝ ոչ պակաս Speed index- Q(160), ծանրաբեռնվածության ինդեքսը՝*

ոչ պակաս Load index 107/105, առավելագույն ծանրաբեռնվածության ինդեքսը՝ Max.load(kg) ոչ պակաս 975/925kg, Անվադողի վրա պատկերված լինի ձմռան պայմաններում շահագործվելու փաստը հաստատող նշան՝ ձյան փաթիլ, կամ եռագագաթ, կամ նմանատիպ նշան, Արտադրության տարեթիվը 2020-2021թթ. Գործարանային վազքը (երաշխիք) ոչ պակաս 30.000 կմ: Նոր չօգտագործված, Գույնը սև, վախենում է կրակից, գործող ստանդարտը ՀՍ 183-99, փոխադրումը Ցանկացած տրանսպորտով, մատակարարի կողմից:»:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական

հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա, ուսումնասիրելով նաև Պատվիրատուի կողմից 23.08.2021թ.-ին թիվ ԵԱ 568-ել գրությամբ ներկայացված տվյալները, դրանում առկա հղումները, ինչպես նաև Բողոքի հանգամանքները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն մրցույթի 1-ին 2-րդ չափաբաժինների մասով Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի մրցույթի տեխնիկական բնութագրերը բխում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա չեն փոփոխման:

Ընդ որում, հարկ է նկատել, որ Ընկերությունը Բողոքներ քննող անձին չի ներկայացրել նաև Պատվիրատուի կողմից 23.08.2021թ.-ին թիվ ԵԱ 568-ել գրությամբ ներկայացված տվյալների և դրանում առկա հղումների վերաբերյալ առարկություններ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարված «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Զեթ իքս Գարաժ» ՍՊԸ-ի կողմից 17.08.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/68 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**